ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի 2019 թվականի N 1 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ2020
ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 08-ի N 1000-Ն որոշման N 2 հավելվածի 12-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության բնապահ-պանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչության 2020 թվականի գործունեության տարեկան ծրագիրը համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի գործունեության տարեկան ծրագրի վերաբերյալ Տեսչական մարմնի կառավարման խորհուրդ ներկայացվող հաշվետվության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ